



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2015թ.

N 63 -Ա

ք.Ստեփանակերտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ
ՏԵՂԱՄԱՍ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասին և 59-րդ հոդվածին համապատասխան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 19/50 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 7-Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի հերթական ընտրություններին Հայաստանի Հանրապետությունում բնակվող կամ գտնվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքն ապահովելու և ընտրությունները կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչությունում կազմավորել ընտրական տեղամաս՝ «Երևան/1» անվանմամբ:

2. Սույն որոշման պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչություն:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ